ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏՏԵՍԱԳԻՏ

35

www.asue.am

- 1977 թվականի սեպտեմբերի 20-ին լույս ընծայվեց Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի պաշտոնաթերթը՝ «Տնտեսագետը»: Նրա հիմնադիր խմբագիրը դարձավ Ռաֆայել Երվանդյանը: Թերթի առաջին համարի գլխագրից վերև վերտառված էր «Բարի՛ երթ Տնտեսագետին»: Այսօր երեքուկես տասնամյակի հեռավորությունից հետադարձ հայացք ձգելով պարբերականի անցած ճանապարհին՝ կարելի է ասել, որ այդ երթը, իրոք, բարի է ու «Տնտեսագետի» որդեգրած առաքելությունն ու նպատակն էլ բարի են ու արգասաբեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ



- Օրեցօր «Տնտեսագետը» հասունացավ, հարստացավ բովանդակությամբ, ձեռք բերեց շնորհալի հեղինակներ ու պահանջկոտ ընթերցողներ: Նրանք դարձան խմբագրակազմի մշտական այցելուները, խորհրդատուներն ու քննադատները:

Տնտեսագետ

1985

- Թերթի ստեղծմանը հաջորդեց զարգացման ու կայացման, սեփական ձեռագրի ձևավորման խաղաղ տասնամյակը: Պարբերականն իր ուրույն մասնակցությամբ կարևոր տեղ գրավեց բուհի կյանքում՝ իր շուրջը խմբված համախոհների հետ մտահղանալով և իրագործելով բուհի մշակութային կյանքը հարստացնող բազմաթիվ միջոցառումներ և, իհարկե, դառնալով դրանց առաջին արձանագրողն ու մեկնաբանողը:

- Թերթն իր կենսագրության երկրորդ տասնամյակը թևակոխեց մի շրջանում, երբ սկիզբ առան մեծ վերափոխումներ և վերակառուցումներ, բնության արհավիրքը՝ աղետալի երկրաշարժը, ղարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծման պահանջը, ազգային զարթոնքը... Փորձության ժամ էր...
- Այդ օրերին «Տնտեսագետը» իր սահմանված ծավալը գերազանցող համարներ թողարկեց, որոնցում ռուսալեզու հոդվածներով հրապարակայնացրեց իր ժողովրդի արդարացի պահանջի էությունը և առաքեց դրանք արդեն փլուզվող Խորհրդային միության և արտասահմանի տնտեսագիտական ու ոչ տնտեսագիտական բուհեր:

ՏԼՏԵՍԱԳԵՏ
ПО ЗАКОНАМ БРАТСТВА
ՊԱՏՇԱՄԸ


ТЕНДЕНЦИЯ И ПОЛИТИКА
ТАКОЙ ВОТ ИНТЕРНАЦИОНАЛИЗМ
НАГОРНЫЙ КАРАБАХ:
ИЗМУЧЕННАЯ ИСТИНА
АРМЕНИЯ–АРЦАХ

- Մեր բուհից մեծ թվով հայրենասեր երիտասարդներ զինվորագրվեցին Արցախյան կռվին, անձնազոհության ու անվեհեր հայրենապաշտության փայլուն էջեր գրեցին իրենց կենսագրություններում և սեփական ժողովրդի պատմության էջերում: Մի մասը վերադարձավ, մի մասը մարտիրոսացավ սրբազան պատերազմում: «Տնտեսագետը» դարձավ նրանց հերոսականության ուղուն հետևողը, վավերագրողը, հիացմունք, հպարտություն ու անդառնալի կորստի ցավ ապրումակցողը:

ՀՀՄՍԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ



ԳՆԵՐԻ ԼԻԱԲԵՐԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ

ՆՐԱՆ ՈՒՂՂԱԿԻ ԵԳԱՐ ԵՆ ԿՈՉՈՒՄ

ՍՈՍ

ՄԱՐԴԸՆԿԱՆ ԽՊՂՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱԿ-Ի ԱՆԴԱՄ

ԲԱՐԴՐԱՑՎՈՒՄ ԵՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԸ, ՍԱԿԱՅՆ...

ԱՐՑԱԽԻ ՀԵՏ, ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԲԱՐԴՐԱԳԻՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՍՈՒՐՈՐՈՂԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

ՆՈՒՐ ԱՋՈՒՆԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տնտեսագետ
ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱՍՏԻԿԻՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
№3 (488) Մարտ 1992 թ.

Հայոց
ուխտի
գիմկորները

- Անկախացող երկրի ճգնաժամերին, շրջափակումներին, տնտեսական կյանքին ու կրթական հիմնախնդիրներին, ներբուհական զարգացումներին, բուհի մարդկանց հոգսերին երբեք անհաղորդ չմնաց «Տնտեսագետը», երբեք չընկրկեց դժվարությունների առջև և հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ շարունակեց իր ճանապարհը:

Տնտեսագետ
Տնտեսագետ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
80
30

- Վերանայումներ, որոնումներ, նոր թեմաներ ու խորագրեր, նոր հեղինակներ ու թարմ ասելիք, ու ամեն անգամ, ամեն համարի լույսընծայման հետ սպասում ու հուզումներ, այնուհետև դրվատանք ու դիտողություն, առաջարկություններ ու կրկին նոր շնչով առաջխաղացում: Ժամանակի ընթացքում փոխվեց թերթի ծավալը, պարբերականությունը. շաբաթաթերթից վերածվեց երկշաբաթաթերթի, այնուհետև ամսաթերթի....

Տարեգրություն
25
Մենք
Շնորհավորում են
Ռեկտորները
Երեկվա ու այսօրվա
մեր թղթակիցները
Մեր ընթերցողները

- Մեկ տարի առաջ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փոփոխությունների համատեքստում վերափոխման շրջափուլ ապրեց նաև «Տնտեսագետը»: Բուհում ստեղծվեց լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, և «Տնտեսագետը» ընդգրկվեց նրա կազմում: Սակայն սա ամենը չէր. նրան վերապահված էր մի նոր դիմագիծ՝ նոր արտահայտչամիջոցներով, նոր ոգով , նոր ասելիքով:
- 2012 թվականի առաջին համարը լույս աշխարհ եկավ որպես «Տնտեսագետ» ամսագիր՝ ամբողջապես գունավոր, նոր ձևավորմամբ, նոր խորագրերով...
- Համալսարանի ղեկավարության հոգածությամբ ու աջակցությամբ արդեն մեկ տարի է, ամսագիրն իր ընթերցողին է հասնում անվճար և ՀՊՏՀ պաշտոնական կայքի միջոցով հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԵՂԱՐՎԵՍՏՈՒԹՅՈՒՆ

www.asue.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԵՂԱՐՎԵՍՏՈՒԹՅՈՒՆ

www.asue.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԵՂԱՐՎԵՍՏՈՒԹՅՈՒՆ



HEIDELBERG


www.asue.am

www.asue.am

www.asue.am

Enova
Finesse

- 35 տարիների ընթացքում «Տնտեսագետը» հանդիպել է իր ընթերցողին 670 անգամ, այսօր տպագրության է պատրաստվում 671-րդը: Շարունակաբար թարմացվող ու վերանայվող ամսագիրը հավատարիմ է այն կարևոր ձեռքբերումներին, որոնք ուղեկցել են նրան տարիներ շարունակ:

ՏՆՏԵՍԱԳԵՏ

ՏՆՏԵՍԱԳԵՏ

- Խմբագրակազմը շարունակում է աշխատել ստեղծագործական ոգով, պրպտել, հետևել կյանքի հարափոփոխ ընթացին ու փորձել հետ չմնալ:
- «Տնտեսագետը» իր 35 տարիների արժանապատիվ ու անընդհատական գոյության համար պարտավոր է բոլոր ժամանակների ռեկտորներին, պրոռեկտորներին, դեկաններին, ամբիոնների վարիչներին, իր թղթակիցներին, որոնք նաև խմբագրակազմի լավագույն բարեկամներն են, իր անաչառ ու խստապահանջ ընթերցողին, որին ուղղված է նրա հայացքը և հանուն որի նա շարունակելու է բուհական պարբերականի իր ինքնատիպ ու պատվաբեր ճանապարհը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գաղափարդ դարձրի՛ր **իրականություն**